



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

<<31>> օգոստոսի 2012թ.

N: 238 - Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՈՒՌՈՒՑՔԱՔԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԼԱՆՍԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏԵՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԱԼԵՐԻԿ ՇԻՐԻՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՎԱԼԵՐԻԿ ՇԻՐԻՆՅԱՆԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՈՒՌՈՒՑՔԱՔԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԼԱՆՍԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏԵՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ կետի «թ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 70-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N 23-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 71-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողովի 2012 թվականի օգոստոսի 28-ի «Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին» որոշումը և եզրակացությունը, Վալերիկ Շիրինյանի 2012 թվականի օգոստոսի 30-ի դիմումը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2012 թվականի օգոստոսի 31-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնակատար Վալերիկ Շիրինյանի լիազորությունները:
2. Վալերիկ Շիրինյանին 2012 թվականի օգոստոսի 31-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնում և նրա հետ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետով կնքել աշխատանքային պայմանագիր:

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ

